Միջազգային գիտատեխնիկական կենտրոն
/ընդհանուր նկարագիր/

Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը (ՄԳՏԿ) ստեղծվել է 1992 թ. Մոսկվայում՝ Եվրոմիության, Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի եւ Ճապոնիայի միջեւ ստորագրված միջազգային համաձայնագրի հիման վրա: ՄԳՏԿ անդամ պետություններն են՝ Կանադան, ԱՄՆ, Եվրոմիությունը, Ճապոնիան, Նորվեգիան եւ Կորեան, ինչպես նաեւ Ռուսաստանը, Հայաստանը, Բելոռուսիան, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Տաջիկստանը:

ՄԳՏԿ կոորդինացնում է մի շարք կառավարական եւ միջազգային կազմակերպությունների, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների աշխատանքները՝ հնարավորություն տալով Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների գիտնականներին գիտատեխնիկական գործունեություն իրականացնել քաղաքացիական բնագավառներում: ՄԳՏԿ միջկառավարական կազմակերպությունը հստակեցնում է համագործակցությունը ՌԴ եւ ԱՊՀ մյուս պետությունների գիտնականների եւ նրանց Կանադայի, Եվրոմիության, Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության, Նորվեգիայի, ԱՄՆ հետազոտական կազմակերպությունների գործընկերների հետ:

ՄԳՏԿ-ն նպաստում է միջազգային գիտական նախագծերի իրականացմանը, ինչպես նաեւ աջակցում է համաշխարհային գիտական եւ գործարար հանրությանը գտնել Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների ունիկալ գիտական հնարավորություններ ունեցող ինստիտուտները՝ համագործակցելու եւ համատեղ ծրագրեր ներդնելու համար:

ՄԳՏԿ գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝

- հետազոտական ծրագրեր, որոնց շրջանակներում գիտնականները եւ մասնագետները զբաղվում են գիտատեխնիակական հետազոտություններով,
- աջակից ծրագրեր, որոնք օգնում են նախկին գիտնականներին ինտեգրվել միջազգային հասարակությանը: Այդպիսի աջակից ծրագրերից են առեւտրայնացման ծրագրերը, մասնագիտական որակավորման բարձրացման ծրագրերը, գիտաժողովների կազմակերպումը:

Համաձայն ՄԳՏԿ կանոնադրության՝ կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են.

- Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի «պաշտպանական խնդիրներով զբաղվող» գիտնականների համար (հատկապես նրանց, ովքեր գիտելիքներ եւ հմտություններ ունեն զանգվածային ոչնչացման զենքերի եւ առաքման միջոցների բնագավառում) ստեղծել հնարավորություններ իրենց տաղանդն ու ներուժն ուղղորդելու դեպի խաղաղ գործունեություն,
- ազգային եւ միջազգային տեխնիկական խնդիրների լուծման հարցում համագործակցություն,
- գիտնականներին շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում աջակցություն,
- հիմնարար եւ կիրառական հետազոտությունների եւ տեխնիկական մշակումների իրականացմանը աջակցություն,
- Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի «պաշտպանական խնդիրներով զբաղվող» գիտնականների՝ համաշխարհային գիտական հանրությանն ինտեգրման աջակցություն:

ՄԳՏԿ ծրագրերի եւ նախագծերի միջոցով աջակցություն են ստացել ավելի քան 60.000 գիտնականներ եւ մասնագետներ Ռուսաստանի եւ ԱՊՀ երկրների 765 գիտահետազոտական ինստիտուտներից:

PDF created with pdfFactory trial version www.pdffactory.com